

ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Ատրպետի



ΑΡΤΑΞΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΣ.

1911 թ. Revue Numismatique հանդիսի չորրորդ սերիայի, XV-երորդ հատորի—չորրորդ եռամսնակի մէջ զետեղուած է Փարիզի Bibliothèque Nationale-ի արձանագրութիւնների բաժնի ղեկավար M. E. Babelon-ի ղեկուցումը (1911, հր. 363) հետեւիւ գրամի նկարագրութիւնը, որը կտրուած է հայկական Արտաշատ, կամ Արտաքսիաշատ քաղաքում, (Պատկեր թիւ 1):

Առաջին երեսին աջակողմն նայող Անահիտի դէմքը (Athène), որը պատկուած է պարսպաւոր թաղով, Այստեղ պահպանուած է հայկական դրամների ընդհանուր ոճը, նոյնիսկ շրջանակը երկարայուն ուլունքից և գնդաձև մարդարտից է կազմուած: Ինչպէս բացատրել եմ «Հայ թագաւորների դրամները» գրուածքիս յառաջաբանում և ամեն մի գրամի նկարագրութեան մէջ, այստեղ այդ բոլորը վերահաստատուած է: (Տես Ազգագր. Հանդ. թիւ 21—23 համարներ):

Դրամի երկրորդ երեսին բոլորաձև արձանագրուած է յունարէն ΑΡΤΑΞΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΣ, յաղթականը (Tychè) սաւառնում է դէպի ձախ, աջ ձեռքով տարածում է մի պսակ և ձախում բռնած է մի դափնի ռստ: Հագւած է մի նուրբ բէհէզի պատմուճան առանց թևերի, մէջքին դօտի, վիզը և կուրծքի մի մասը բոլորակաձև բաց և պատմուճանի վերնամասը բաժանուած է ազգրի մօտ ներքնամասից: Յաղթականի զլուխը բաց է, գեղեցիկ կերպով զարդարուած է սոսկական մաղերի հիւսուած—կապուածքով, գեղեցիկ դէմքով և թիկունքից դէպի ետևը տարածուած թևերով, սաւառնում է օդի մէջ:

Դրամի հարթութեան մէջ ձախակողմը արձանագրուած է IB և աջ կողմը ՅԷ և այս արձանագրութեան տակն է APTAΞ մենագիրը (monogramme)։ Դրամը պղինձ է, 26 հազարերորդական մետր տրամագծով։

Բազմաճմուռ դրամագէտը ասում է, որ APTAΞIΣATON յոգնակի սեռական հոլովի ձևի տակ հնումը սովորաբար ըմբռնում էին Արտաշատ Մեծ-Հայաստանի մայրաքաղաքը։ Ստրաբոնը նոյնպէս մեզ ասանդում է (XI, 14, 6.) որ այս քաղաքն անուանւում էր Արտաշատ կամ Արտաքսիաշատ։ Այսպիսով ուսումնասիրողը յայտարարում է, որ Արտաշատ քաղաքը ստաշին անգամ դասաւորւում է դրամագիտական աշխարհում։

Ապա հեղինակն մեզ տալիս է դրամի կտրւած տարին $\Xi\Theta=69$ և IB տասներկուերորդ ամիսը, բայց հարց է տալիս, թէ այս 69-ը թիւ թւական կարող է լինել։

Ինչպէս յայտնի է, Տիգրան մեծը իր դրամների վրայ գործածում էր Սելևկեան թւականը։ Բայց վերջին թւականը հեղինակը չի կարողանում Սելևկեան թւական համարել, քանի որ տասերի ձևերը, մանաւանդ Միտրոսպոլ—մայրաքաղաք բառը ուշ ժամանակներ է գործադրուել։ Այս թւականը Արտաշատի հիմնարկութեան (189 տարի Ք. ծ. առաջ) չի կարելի համարել, այլ պէտք է կարծել Պոմպէոսի սկսած թւականը, որը գործածւել է Սիրիայի, Փոքր-Հայքի և Կապադովկիայի մի քանի դրամներ վրայ։ Բայց այդ էլ համապատասխան չէ գտնում, այլ ենթադրում է, որ Տրայանոս կայսեր 114 թ. Ք. ծ. յ. Փարթամասպ պարսից կողմից դրւած թագաւորին հռոացնելուց և Խոսրովին դա՛հ բարձրացնելուց յետոյ սկսւած մի թւական, որի 69 երորդ թւին, (Ք. ծ. 189 թ.) Կոմմոզ կայսեր օրով կտրւած մի դրամ Հայկական Արտաշատ քաղաքում, (պատկեր թիւ 2. դրամ Ռոմի պարսից թագաւորի) բայց թւում է, թէ այս ենթադրական թւականները չի կարող ճիշտ լինել, քանի որ ըստ զեղարուեստական կազմի այս դրամը աւելի հին ժամանակներն է յիշեցնում։ Եթէ վերցնենք Արտաշատում դրոշմւած Ռոմի դրամը—(Ք. ծ. 16 թ.), Ջենոն-Գերմանիկոսի դրամը—(35—51 թ.), նոյն իսկ Կոմմոզ կայսեր դրամները, որոնք զեղարուեստի անկման մի այնպիսի շրջանում են գտնւում, որ երբէք վերև յիշուած դրամի քանդակագործութիւնը չի կարելի նրանց մօտ համեմատութեան դնել։ Եթէ զննենք դրամի զեղարուեստական քանդակները, տիպը և մանրամասնութիւնները նրան պիտի Դրիստոսի ծ. 252 տարի ետ տանենք և դասաւորենք Սելևկեան Անտիոքոս Մեծի և յաջորդների դրամների շրջանին, կամ Սելևկեան 69 թ. մօտաւորա-

ապէս 252 թ., որ մեր Արշամ թագաւորի շրջանին է պատկանում: Բայց այս շրջանում յունական տառերը չունէին այն բուրրածնը, ինչ որ նկատելի է դրամի վրայ և այս պարագան է, որ Babelon-ին ենթադրել է տալիս, թէ դրամը պէտք է Դ. ծ.-ից վերջը համարել:



Քիւ 2

Մենք կարծում ենք, որ բազմահմուտ դրամագէտը անշուշտ սըխալւում է դրամի արձանագրութեան ընթերցանութեամբ: Երբէք և ճշ մի դրամի վրայ մինչև այսօր չի նկատուած որ տաս-

ներկու թուանշանը գրուի IB, այլ միշտ գրուել է BI, այսինքն նախ միաւորը և ապա տասնաւորը, նախնիքների սովորութեան համաձայն: Յունական բիւրաւոր դրամների վրայ և ուրիշ արձանագրութիւնների մէջ չի կարելի մատնանշել, որ նախ մեծ թիւը գրողմուած լինի, ապա փոքրը, այլ միշտ ընդհակառակն է: Հետևաբար երբէք չի կարելի IB-ն ընդունել տասններկուերորդ ամիս: Արեւելքում Սելևկեան, Արշակունի և Տիգրանի դրամների վրայ նկատուած է ամիսների մակեդոնական անունները, բայց թուահամարով ամիսներ մինչև օրս որեւէ դրամի վրայ չի մատնանշուած ΔΙΟΥ, ΞΑΝΔΙ, ΠΕΡΙΤΤΟΥ և ուրիշները կարելի է միշտ ցոյց տալ, բայց IB միակն է, ուստի այս դրերը 12-րդ ամիս նշանակելը կասկածելի է: Նոյնպէս ΘΞ աւելի հաւանական է ΘΕΥ Աստուծոյ կարգալ, քան թէ 69 թիւ համարել:

Babelon-ի գլխաւոր առարկութիւնը Մետրոպօլէոս — մայրաքաղաք ΜΕΤΡΟΠΟΛΕΩΣ բառն է, որի գործածութիւնը սովորական է դարձել Դրս. ծ. յետոյ: Բայց այս ենթա-



Քիւ 3

գրութիւնն էլ վիճելի է, նախ որ Ստրաբոնը «Մետրոպօլ» քաղաքներ է անուանում իր աշխատութեան մէջ Մեծ Փոլսկայում, XII, Ը, 13. XIV, Բ, 29, Յոնիայում XIV, Բ, 15, որոնք յայտնի էին և գործածական: Արմենները որոնք Փոլսկայիներէ հետ ցեղա-

կան կապ ունէին, իշնոց մայրաքաղաքը կարող էին մեարդուր՝ անուանել, իրենց նախնի յիշատակները պահպանելով: Մանաւանդ որ այդ անունը—Մայր քաղաքների մի այնպիսի պարծանք էր, որ ամեն ազգ պէտք է ձգտած լինի իւրացնելու: Հետեւաբար նրա սովորական գործածութիւնը չի կարող ենթադրել տալ, որ նա աւելի վաղ գործածուած չէր կարող լինել:

Այս բոլոր պարագաները մեզ ստիպում են համոզուելու որ այս դրամը պատկանում է Արտաշատի ամենահին շրջանին, ոչ աւելի ուշ քան թէ 250 թ. Քր. ծ. առաջ:

Նոյնիսկ եթէ ընթերցողը զննէ մեր թիւ 2—Ոսնի դրամը, որ կտրուած է Քրիստոսից 10—12 տարի յետոյ և թիւ 1 և 3 դրամները, որոնք մենք համարում ենք կտրուած Ք. ծ. 252 տարի առաջ, նա պիտի համոզուի, որ թիւ 1 և 3 դրամները չի կարելի Ոսնից յետոյ դասել, գեղարուեստական մասը ընթերցողին էլ կստիպի համոզուելու, որ դրամը կոպիտ գեղարուեստական շրջանի գործ չէ:

Բայց ամենագլխաւորը այս դրամի մէջ այն է, որ անկասկած նա դրոշմուած է Արտաշատ քաղաքում, և այս դրամով, ինչպէս Babelon-ն էլ նկատում է, Արտաշատ քաղաքը անկասկած մտնում է դրամահատական քաղաքների շարքը:

Իսկ այս պարագայից աւելի գերադասելի է այս դրամը իր **IAῘ** մենագրով, որն անկասկած կտրուում ենք **APTEAT**: Արդէն այժմ կասկած չի կարող լինել, որ բառացի գրուած Արտաշատ քաղաքի մէջ կտրուած դրամի վրայ գտնուած այս մենագիրը Արտաշատ քաղաքի ծածկանունն է արտայայտում: Այն բոլոր դրամները, որոնք մենք համարել էինք Արտաշատում կտրուած, (տես Ազգ. հանդէս XXI—XXII և XXIII գրքերը) մենագիրների ենթադրական ընթերցումով, այս դրամը գալիս է հաստատուել մեր բոլոր ենթադրութիւնները: Արտաշատը դրականապէս մտնելով դրամահատական քաղաքների շարքը, այս վերջերս գտնուած դրամով գալիս է աշխարհին ազգարարելու, որ իր մենագրով դրոշմուած բոլոր դրամները, որոնց վրայ տառացի արձանագրուած չեն իր անունը, իրեն է պատկանում:

Ներդաշկան այն բոլոր դրամագէտները, որոնք մեր XXIII գրքի երես 51—56 ցոյց տուած դրամները իրենց գեղարուեստական քանդակների համար մտածում էին վերագրել Փոքր-Ասիայի յունական գաղթավայրերին, այսօր անկասկած պիտի համոզուին, որ նրանք դրոշմուած են Արտաշատում: Հետեւաբար քանդակագործութեան արուեստի մեր երկրում Քր. ծ. 4—5 դար առաջ հիմ-

նաւորուած և կատարելութեան հասած լինելը այլևս կասկածելի չի կարող մնալ:

Իայց այս դրամի հետ մենք ասպարէզ ենք դնում մի երկրորդ դրամ որ վերջերս ձեռք է դցել Թիֆլիսում Պատեբսոնը:

Այս դրամը կտրուած է ΣΑΜΟΣΑΤΑ քաղաքում, Կամփօզէնում, որը նոյնպէս կրում է (ΜΕΤΡΟ)ΠΟΛΕΩΣ անունը, «Մետրօ» տառերը փշացած են, իսկ «Պօլէոս» շատ որոշ են: Անշուշտ մաշուած տառերը չի կարելի ուրիշ բան ենթադրել, բացի ΜΕΤΡΟ բառից: Այս դրամը, որ իր չափսով և ձևով յիշեցնում է ΑΡΤΑΣΑΣΑΤ-ում դրօշմուած և վերել նկարագրուած դրամը, յիշեցնում է, որ նրա հետ ժամանակակից է: Տարաբաղդութիւնն այն է որ Babelon-ի հրատարակած դրամի քանդակը հրաշալի կերպով պահպանուած է, այն ինչ Պատեբսոնի դրամը խիստ մաշուած և փշացած է:

Առաջին երեսին նկարուած էր մի ամհնի առիւծ, որի ձեւը դիրքը կարելի է բանդակագործութեան գլուխ-գործոց համարել: Զը նայած որ մեծ մասամբ մաշուած է, բայց դարձեալ հրաշալիք է ներկայացնում: Այս առիւծը ցոյց է տալիս Նիքրատի հովտի հսկայական ոյժը և իշխանութիւնը:

Եթէ մենք քննենք դրամագէտներին նկարագրած Կիլիկիան և Փոքր-Ասիայի այլևայլ ծովեզերքների երկրներին յատկացրուած առիւծի շքանշանով դրամները, համեմատութեան դրնենք այս դրամի հետ, մենք անմիջապէս կը գտնք այն եզրակացութեան, որ այս դրամը չի կարելի Ք. ծ. յետոյ դասել, այլ նա եթէ ոչ հինգ, գոնէ երեք դարով վաղ է և իր զեղարուեստով յիշեցնում է դրամական զեղարուեստի ոսկէ դարը (V դար Ք. ծ. առաջ): Դրամի շրջանակն է մի երիզ, որի զարդերն այնքան փրշացել են: Երկրորդ երեսին նստած է քաղաքի պաշտպան դիցունհին՝ Անահիտը, պորտաքարի վրայ, աջ կողմը ΣΑΜΟΣΑΤ Շամոշատ և ձախ կողմ ΜΕΤΡΟ-ΠΟΛΕΩΣ անահիտի ձեռքին մի ձիթենու ճիւղ: Դիցունու գլխին դրած է քաղաքի պարիսպների ժանիքներով մի թագ, որը նման է Սիրիայում դրօշմուած Սելևկեան քաղաքների պաշտպան դիցունհինների կրած խոյրին:

Այս պատկերի կազմը նման է Տիգրան-Մեծի սովորական դրամների վրայ գտնուած և ամբողջ եւրոպացի դրամագէտներից Անտիոքիայի անդրին համարուած պատկերին, սակայն այս պատկերի տակ պակասում է Որոնդ գետի մարմնացեալ պատկերը, որը դրօշմուած է Որոնդ գետի մէջ լողալիս դիցունու ոտքերի տակ: Որոնդ գետի և մարմնացեալ Որոնդի բացակայութիւնը մեզ ենթադրել է տալիս, անդրին Անահիտին վերագրելու Շամոշատին վերագրուած Զարեհի և Մորփիւլիքի դր-

բաժնիքը (տես Աղգ. Հանդէս դիրք XXIII երես 33 և 35, պատկեր 27 և 29), դրօշմուած են Անահիտի պատկերով, որը բոլոր դրամագէտներէց միաձայն ընդունուած է և քաղաքի պաշտպան զիցուհին է համարուած: Հետեաբար Շամուշատ մայրաքաղաքի METPOΠΟΛΕΩΝ-ΣΑΜΟΣΑΤΟΝ դրամի վրայ բացի Անահիտից չի կարելի մի այլ զիցուհի ենթադրել:

Եթէ այս դրամի վրայ փորագրուած պատկերը Անահիտին է, Տիգրանի բոլոր դրամների վրայ արձանագրուած պատկերը չի կարելի Անտիոքիային վերագրել: Այս վերագրումը բացի այս յարաբերութիւնից ունի այլ պատճառներ:

Տիգրանը որպէս նուաճող Ասորիքի, հայկական աւանդական Անահիտ զիցուհու անդրին չէր յետաձգել և նրան փոխարինել ասորական Անտիոքիայի պատկերով: Մանաւանդ որ Սելևկեան և Հոմէակեան տիրապետութեան շրջանում Անտիոքիայի արձանը ամեն մի դրամի վրայ նկատելի է գրեթէ կիսամերկ, նրբին շղարշով պատած է կիսից վայր, շղարշի տակից նկատելի են ոչ միայն անդամներն ու կողոսկորները, այլ նոյնիսկ ազդրի սրունքի ոտքերի նրբին գծերը, այնինչ Տիգրանի բոլոր դրամների վրայ զիցուհու պատկերը ամփոփուած է լայն ու թանձր հագուստով:

Նոյնիսկ Դելֆիանոն, Պալոէմաիդ, Տիգրանակերտ և ուրիշ քաղաքներում դրօշմուած դրամների վրայ ևս նոյն պատկերն է նկատուած, ինչ որ Անտիոքիա քաղաքի դրամների վրայ կան, այնինչ այդ բոլոր քաղաքներում պաշտուած և նրանց պաշտպան երբէք չէր համարուած Անտիոքիա զիցուհին: Հետեաբար Շամուշատի սոյն դրամը մեզ աւելի քան համոզում է, որ Տիգրանի դրամներին նկատուած քաղաքների պաշտպանուհի համարուած զիցուհին բացի Անահիտից ոչ ոք չի կարող լինել:

Շամուշատը Եւրոպայի դրամագէտների կողմից արդէն վաղուց մտած էր դրամահատական քաղաքների շարքը, իսկ այն դրամների հետ, ոչ միայն Արտաշատն էլ մտնում է դրամահատական քաղաքների շարքը, այլ Արտաշատ APTAΞIATON արձանագրութեամբ դրամը հաստատում է, որ Արտաշատ այդ դրամի կտրուիւց, թէ առաջ և թէ յետոյ ունեցել է իր յատուկ փոքրանոցը:

Արտաշատի դրամի վրայ դառնուած մենագիրը, ոչ միայն APTAΞAT բառն է մեզ տալիս, այլ գալիս է ապացուցանելու մեզ այն ցուցումները, որոնք տպագրուեցան Աղգ. Հանդէսի XXI—XXIII դրբերում «Հայ թագաւորների և քաղաքների դրամները» վերնագրի տակ, եթէ նորից գննէ ընթերցողը XXII դրբի, երես

205 մենագրի թիւ 16, 24, 25, 26, և 207 երեսի մենագրի թիւ 28, 29, 30, 32, 36, պիտի համոզուի, որ այդ մենագիրները չի կարող ուրիշ բառ արտայայտել բացի ΑΡΤΑΣΑΤ կամ ΑΡΤΑΞΑΤ անունը:

Թողնելով ապագային աւելի շօշափելի փաստեր լոյս աշխարհ սփռելու, մենք յոյս ունինք, որ դրամագիտութեամբ հետաքրքրուող հայերը այս նիւթի մասին իրենց ունեցածները չեն զլանայ Ազգ. Հանդէսի խմբագրութեան հասցնելու, որպէս զի հնարաւորութիւն ունենանք լրացնել այս հետաքրքրական ուսումնասիրութիւնը, որը պիտի պարզէ Հայ-պատմութեան ամենամութ էջերը:

